



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 6.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԵՅՆԲՈՐԳ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

ԱՏԵԱՆ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1870.

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

- 1° Սոսյ կաթողիկոսութեան խնդրին վրայ քրէարկութիւն .
- 2° Վերաքննութիւն Ազգային Սահմանադրութեան .
- 3° Ժողովրդեան կողմանէ ներկայացեալ հանրագիրներ .
- 4° Ընթերցումն եւ հաստատութիւն ասենական կանոնաց .

Ասեանը բացվեցաւ ժամը 6 1/2 ին . 69 երեսփոխանք ներկայ էին , 7 երեսփոխանք նամակաւ իրենց բացակայութեան պատճառները ծանուցած էին , որոց անունները կարդալէ ևտքը , Ասենապետ Էֆէնտին օրվան խնդրին հրաւիրեց ըզ ժողովը , եւ յիշեցուց թէ Սրբազան Նախագահը վերջին նիստին առաջարկութիւն մ'ըրած ըլլալով որոշված էր որ Նորին սրբազնութիւնն իր առաջարկութիւնը խմբագրելով հաղորդէ ժողովին , եւ թէ արդէն հրաւիրագիրներէն վերահասու եղած են երեսփոխանք որ այսօր քրէարկութիւն պիտի ըլլայ Սոսյ եւ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրութեան խնդրոյն վրայ . Իսկ որովհետեւ զիւանը երբ խնդրեց Սրբազան Նախագահէն իր առաջարկութեան խմբագրութիւնը , պատասխան ընդունեց թէ ինք զրով պիտի ներկայացնէ այսօրվան ասեանին : Ուստի խնդրվեցաւ որ Նորին սրբազնութիւնը խօսք անու :

Ս . ՆԱԽԱԳԱՀ . — Սոսյ եւ Աղթամարայ կաթողիկոսութեան ընտրութեան խնդիրը պէտք է հաւասար իրաւունքով բաժնել Ընդհանուր ժողովին եւ թեմականաց վրայ . որուն եղանակը սա է . թեմական Ընդհանուր ժողովը պէտք է երեք ընտրելի ցոյց տայ եւ Պօլսոյ Ընդհանուր ժողովն անոնց

մէջէն մէկն ընտրէ :
 Ըստ իս այս է միակ միջասահման կետը , որ երկուստեք կողման իրաւունքները հաւասարապէս յարգելով , ազգային եկեղեցւոյ ողին եւ սահմանադրութեան օրէնքը միանգամայն կը պահպանէ :
 Իսկ Այրարատայ նախամեծար Մայր Աթոռոյն նախնի Հաղաստանեայց կեկեղեցւոյ ազատ հայրապետութեան խնդիրը , պէտք է ի կախ թողուլ այժմ եւ նախ բանակցել Սրբազան կաթողիկոսին հետ , նախապարտատու խնդրոյն ծրագրիրը եւ ապա ձեռնարկել ի նոյն :
 Այս է առաջարկութիւնս եւ ասոր վրայ սա բացատրութիւններն յաւելցնել հարկ կը համարիմ . « Ընտրութեան համար Ազգն ալ , Ընդհանուր ժողովն ալ , թեմականներն ալ իրաւունքներ ունին . ընդհանրապէս ամենուն փախաքը օրինաւոր կերպով ընտրութիւն ընել է . ես ալ իրաւունք ունիմ եւ ամենէն եւել իմ փախաքս է այն աթոռոց վրայ անանկ մարդիկ տեսնել որ ես անոնց խօսքը հասկնամ , անոնք ալ իմ խօսքս հասկնան , եւ ես կարենամ անոնց համար երաշխաւորել առաջի Տէրութեան , ինչպէս որ պէտք է : Այս իրաւունքովն է որ վարչութիւն եւ Ընդհ. ժողով կը պարտաւորին մաս-

բաւանց հակառակ կերպով վերջացնէ ըստ իւր ատաջարկութեան, բարոյապէս ինք լուծեալ եւ կործանեալ կը համարվի առաջի իրաւանց եւ օրինաց . եւ այս վտանդը՝ միշտ կայ իշխանութեան առջև . քանի որ քրէշարկութիւնը չ'է եղած . իսկ բարոյական վտանգը վտանգ չը համարողաց խօսք չ'ունիմ, այնպիսիք կրնան անգործապէս հանդչել մինչեւ որ նիւթապէս շանթ կամ երկրաշարժ չը գայ զիրենք չը սարսէ . »

Նրեւփոխաններէն ոմանք խօսք ուղեցին ատենաբանին պատասխանելու համար :

Ատենապետ էֆէնտին ժողովին կամքը հարցնելէն ետքը, որովհետեւ որ այսօր դադրի այս վէճը, եւ քրէշարկութիւնը մնայ գալնիստին, խօսք ուղղորդեալ կարգը շարունակվի եթէ ժողովն հաճի խօսք տալ անոնց ալ բացառապէս : Աւստի ժողովը խնդրոյ կարգին համեմատ Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն անցաւ :

ԻՆՏԻՄ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՈՒԹԵԱՆ

ՓՈՓԱՋԵԱՆ Մ . ԷՑ . — Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնախումբին իր տեղեկագրին մէջ պատճառելով թէ թաղական ժողովոց կազմութեան եւ Ազգային հանդանակութեան խնդիրներն անմիջական կարեւորութիւն ունին, առաջարկած է որ ժողովն իր վերաքննութիւնը անոնցմէ սկսի . իսկ ես կ'առաջարկեմ որ Սոյ եւ Ազգամարայ կաթողիկոսութեանց խնդիրը ամենէն աւելի ստիպողական եւ կարեւոր ըլլալուն եւ մինչեւ հիմա եղած միճարանութիւնները սոյն խնդիրը ստաւել ճապարկելու քան թէ լուծելու . ծառայած ըլլալուն, զայն Սահմանադրութեան մէջ առնելու համար վերաքննութիւնն անկէ սկսվի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Վերաքննիչ Յանձնախումբին տեղեկաբեր Ռուսինեան էֆէնտին է . քանի որ խօսքը Յանձնախումբին տեղեկագրին վրայ է եւ բացատրութիւն կ'ուզվի, ուրիշ խօսք ուղղորդել առաջ Ռուսինեան էֆէնտին խօսք պիտի արվի եթէ ուզէ պատասխանել :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՑ . — Յանձնախումբը իր պաշտօնական մարմին տեղեկագիր մը ներկայացնելով Քննչանուր ժողովին՝ որմէ ինքն ընտրված է, քանի որ ստիպողական առաջարկութիւններ մատուցած է . ուրիշներ ալ առաջարկութիւններ կ'ընեն իր ստիպողական . ես չեմ սնդեր թէ Յանձնախումբին առաջարկութիւնն ընդունելի է, բայց կ'ուզեմ իմանալ թէ ժողովը Յանձնախումբին տեղեկագրին ընդունած է թէ մեր-

ժամ . նախ եւ առաջ այս տեղեկագրին վրայ ժողովն իր կարծիքը պէտք է տայ, եւ ապա ուրիշ առաջարկութիւններ յառաջ բերվին :

ԻՅԵԿԷՑԵԱՆ ԷՑ . — Կ'ուզեմ իմանալ թէ վերաքննելի Սահմանադրութիւնը մըն է, ՚ի՞նք թէ նորը . եւ թէ ինչ միջոցաւ պիտի կատարվի վերաքննութիւնը : Կ'առաջարկեմ որ այս կետերը որոշվին եւ եթէ կարելի է երեւոյթաւ իր մը խումբ մաս առ մաս վերաքննեն ըզ Սահմանադրութիւնը եւ տեղեկագիր տան ժողովին, որպէս զի ժողովին ժամերը յանօգուտ չը վտանդն երկար եւ ձանձրալի միճարանութիւններով, եւ օրինակ բերելով ասկէ առջի եղած քանի մը նիստերը՝ բողոքեց այն երկար ճառերուն դէմ, որով Քննչ. ժողովոյ նիստերը հրապարակային դասարտութեանց երեւոյթ մը կ'ըստանան եւ ոչինչ բաներու վրայ այսքան երկար ճառեր կը խօսվին ըսաւ . եւ յաւելցուց թէ ճառարտութիւնն ընել ուղղորդել պէտք է հրապարակական դասարտութիւններ բանան :

ԱՅՎԱՏԵԱՆ Մ . ԷՑ . — Յիշելով որ վերաքննիչ Յանձնախումբին տեղեկագրին ասկէ առաջ ժողովին մէջ կարդացվելէն ետքը քրէշի չ'էր գրված, կ'առաջարկեմ որ նախ անի քրէշի զբրվի, եւ եթէ մերժվին տեղեկագրին ըրած առաջարկութիւնները՝ այնուհետեւ Փափագեան եւ Իրէկճեան էֆէնտիններուն առաջարկութիւնները քննենք :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՑ . — Այլատեան էֆէնտին առաջարկութիւնն օրինաւոր եւ խիստ խրատացի դատելէս ետքը, անկէ առաջ խօսք մեծապատիւ էֆէնտինն լրջամիտ դիտողութեանը կը ցանկամ պատասխանել՝ որ « ինչ ինչ » վրայ խօսված ճառերուն երկարութենէն կը սղջարնջայ :

Չայնակից գոյով ես ալ իւր տրտունջին, սա միայն դիտել կու տամ իրեն՝ թէ խնդիրները չ'են ոչինչ, այլ մեր ընթացքն է ոչինչ . խնդիրները չ'են ճապարղ այլ մեր մտքերն են ճապարղ . եւ մեր այս երկար ճառերը՝ մեր անկանոն քայլերուն ու մեր ճապարղ ըմբռնմանց անխուսելի հետեւանքն են : Մենք դեռ համրակ տղայ ժողովուրդ՝ պարզ խնդիրը կը ճապարղենք, եւ նպատակին հասնելու ուղիղ ճամբն չեղելով խտտորնակի կը դեգերինք երկարատեն ընդ ափափայս . եւ երբ իրարու առաջնորդութեամբ դիւր պողոտան ձեռք բերենք, երբ որ հասկեան ու չուկեան իրարու խիստ մտանցած տեսնենք ուղիղ գծի մը վրայ, կ'ը-

կսինք զարմանալով ինքզինքնիս կշտամբել՝ թէ հոն համեմու համար ինչու այնքան հեռունները դեգերեցանք : Աւստի իրաւունք ունին զարմացողներն ու զանգատողները, եւ զիտնալու ենք կանխաւ՝ թէ քանի որ մենք մեր ընթացքն ու քայլերնիս կանոնաւորելու չը վարժինք, այն երկար ճառերու վորձանքը մեր գլխէն պակաս չը պիտի ըլլայ . իսկ բարեբախտօրէն խօսելու ազատութեան հետ մտիկ ընելու կամ չ'ընելու ազատութիւնն ալ ընդունված է իւրաքանչիւրի համար անձնականապէս :

ԱԼԹՈՒՆ ԷՑ . — Ազգ . Սահմանադրութիւնն այն մեծ խնդիրն է որ իր մէջ կը պարունակէ ազգային ամեն խնդրոց հանդոյցը, որոյ լուծմամբը պիտի կարենան փարատիլ այն սեւամած ամպերը՝ որք ժամանակէ մը ի վեր ազգին յառաջդիմական ընթացքը խտրանած են : Աւստի կ'առաջարկեմ որ այսուհետեւ մեր բոլոր նիստերը մի միայն Սահմանադրութեան վերաքննութեանը յատկանան անընդմիջաբար, եւ մինչեւ որ այս խնդիրը չ'աւարտի ուրիշ մը եւ է պատահական խնդիր մէջ չը բերվի, իսկ ուրիշ պատահական խնդիրներու կարգադրութիւնն ալ ես չը թողու համար առ այժմ Ս . Պատրիարք հօր խնամոց յանձնվի, որ պարտուպատշաճը տնօրինէ աջակցութեամբ իւր խորհրդականաց : Ասի տեսակ մը գիշարուցի է, զոր ամենայն վստահութեամբ արժանաւոր եւ կարող ձեռքերու կրնանք յանձնել, եւ ասով զմեզ ամեն հոգերէ ազատ կացուցանելով ընդարձակ ժամանակ կ'ունենանք միմիայն Սահմանադրութեան վերաքննութեան խնդրովը զբաղելու եւ ժամ յառաջ զանի աւարտելու :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ . ԷՑ . — Վերաքննութեան խնդիրը յուզվելու առթիւ ամենուն քով միօրինակ փափաք մը նշմարելով Սահմանադրութիւնը չուտով սրբազրելու եւ ազգին ուղեցոյցը կանոնաւորապէս զործադրութեան մէջ տեսնելու համար, իմ գոհունակութիւնս կը յայտնեմ այս մասին, եւ առաջարկութեանց դառնալով կ'ըսեմ թէ վերաքննութիւնն սկսելու համար կարգ սահմանելու հարկ չը կայ . այլ ինչպէս տեղեկաբեր էֆէնտին ըսաւ, թաղական ժողովոց կազմութեան եւ Ազգ . հանգանակութեան կարեւոր կետերէն կրնայ սկսվիլ . միւս կողմէ Փափագեան էֆէնտին առաջարկութիւնը, այն է Սոյ եւ Ազգամարայ խնդրէն սկսիլ, արդէն լուծման ենթակայ է . այս խնդիրները մէկ տեղ կ'ընթանան եւ առաջութիւն տալու հարկ չը կայ :

ՆՈՒՍՏԻՅԵԱՆ ԷՑ . — Պատասխանելով Իփէկ-

ճրեան էֆէնտին հարցման կը յայտնեմ թէ վերաքննելի Սահմանադրութիւնն այն է զոր ասկէ առաջ Ռ . Գուար զրկած էր Քննչ . ժողովին, եւ Քննչ . ժողովն ալ իր կողմէ յանձնաժողով մը կազմելով անոր վերաքննութեան յանձներ էր . յանձնաժողովն իր պաշտօնը կատարած եւ տեղեկագիր մը մատուցած է արդէն, հետեւապէս տեղի չըկայ վնասուելու թէ մըն է վերաքննելին . այս տարակոյցը լուծվելէ ետքը ուրիշ բան չը մնար մեզի ընել, այլ միայն յանձնաժողովին տեղեկագիրը քրէշի դնել, ինչպէս որ առաջարկվեցաւ արդէն Ռուսինեան էֆէնտին եւ այլոց կողմէն :

Ատենապետ էֆէնտին քրէշի կը դնէ վերաքննիչ յանձնախումբին տեղեկագրութեան բովանդակը եւ ժողովը մեծադոյն մասամբ կ'ընդունի : Գարձեալ քրէշարկութեան կը դնէ տեղեկագրին վերջաբան առաջարկութիւնը, որք նոյնպէս սեծադոյն մասամբ կ'ընդունվին :

ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԳ . — Կ'առաջարկեմ որ վերաքննելի յօդուածները երբ մէկ կողմէ ընդունվին Քննչ . ժողովին, միւս կողմէ անմիջապէս գործադրութեան շրջանին մէջ զրվին, որպէս զի հին սահմանադրութիւնը մէկ ձեռքերնիս եւ նորը միւս ձեռքերնիս տարիներով գործադրութեան չ'ըստպանենք :

Ատենապետ էֆէնտին իր երեւոյթան պատասխանելով Սրբազան նախագահին կը յայտնէ թէ՛ քանի որ հին Սահմանադրութիւնը կայսերական հրամանաւ գործադրութեան շրջանին մէջ է, եւ նորը տակաւին ընդունված եւ վաւերացված չ'է, թէ եւ կրնանք ընդունիլ նոր յօդուածները, բայց չենք կրնար գործադրել մինչեւ որ Բ . զուար չը վաւերացնէ :

ԱՅՎԱՏԵԱՆ Մ . ԷՑ . — Կ'առաջարկեմ որ վերաքննելի յօդուածներէն անոնք որ քաղաքականութեան դպչելու կեա մը չ'ունին եւ պաշտօնապէս տէրութեան հետ յարաբերութիւն մը չ'ունին, ընդունվելէ ետքը անմիջապէս գործադրվի . ինչպէս են հանդանակութեան եւ թաղական ժողովոց կազմութեան խնդիրները :

Յ . ՈՍԿԱՆ ԷՑ . — Սահմանադրութեան վերաքննութիւնն առաջարկվելու առթիւ կեա մը կը ներկայանայ միտքիս առջև, այն թէ ԱՍ տարիէ 'ի վեր ինչ վորձառութիւն ունեցանք . իմ ներքին նպատակս է հասկցնել թէ մենք տակաւին մեր սկզբանց հետ հաշտ չ'ենք : Քանի որ սահմանադրութիւն ըսածնիս օրինակէրք մըն է եւ մենք օրէնսդիր ժողով մըն ենք, գոնէ

պէտք է զխանայինք ցարդ ազգին նխաժական բարոյական, ուսումնական եւ քաղաքական վիճակը, կարծեմ ոչ ոք մէջերնուս պիտի կրնայ ըսել թէ գիտեմ. ուստի նախ յատակադիծ մը պէտք է մեզի, ձեռնհաս անձինք պէտք է զանի պատրաստեն եւ մնայ նոյն յատակադիծը շօշափելով առաջ երթանք, եւ ասոր համար երեք բանի պէտք ունինք, այսինքն ստակ ուսմունք եւ կարեկցութիւն:

Տ. ԵՐԵՄՅԱ ԵՊԹՍՎ. — Յիշեցնելով թէ Մանանայրութեան վերաքննութիւնը երկարելով դաւաններուն վիճակը պիտի ծանրանայ, թէ արդէն Մանանայրութեան դործադրութենէ բնաւին զուրկ մնացած ըլլալով շատ մը դաւաններ վերջին աստիճան թշուառութեան մէջ ընկած են, ինչպէս որ դաւառական մասնախումբին եկած գրութիւնները կը հաստատեն. կ'առաջարկեմ որ այս բանին զարման մը տանելու համար քաղ. ժողովին յանձնվի, եւ վստահ ըլլաց ընդհ. ժողովը թէ նա ամեն պէտք եղածը կը դործադրէ:

ԵՆՈՍԱՌԻՅԱՆ ԷՖ. — Քաղ. ժողովին վրայ ընդհ. ժողովին վստահութիւնը հրախրելէ առաջ ցաւով սրտի կը յայտնեմ թէ Քաղ. ժողովը պարտք մը ունի, զեռ կատարած չէ գայն. առջի օրէն իմաց տուաւ թէ իր համարատուութիւնը պիտի ներկայացնէ ընդհ. ժողովին եւ տակաւին ժամանակ չ'ունեցաւ ներկայացնելու. եթէ ընդհ. ժողովը ուզէ յառաջիկայ նխատին կը ներկայացնենք համարատուութեան տեղեկագիրը: Քաղով Սրբազան նախադասին առաջարկութեան, վերաքննիչ յանձնախումբին արդէն յանձնառած է պատասխան տալ եւ միջոց ցուցած է երկու գլուխները ընդունվելէ ետքը առանց սպասելու ամբողջին լուծման, դործադրել: ուստի կ'առաջարկեմ որ այս կետք որոշվի, եւ ասոր հետ մէկ տեղ կ'առաջարկեմ ժողովոյն նխադաս 13 օր ետքը ձգել, Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը կարենալ ներկայացնելու համար:

ՕԳՍԷՆ ԷՖ. — Որքան վէճերն երկարին եւ խնդիրէն զուրս խօսքեր ըլլան, այնքան խընդիրը կը ճապագի. մեզի Մանանայրութեան վերաքննութիւնը յանձնված է, ուստի դործադրութեան մասին խօսք ընաւ տեղի չ'ունի: Եթէ դործադրութեան պէտք կայ, դործադիր խորհուրդէն ուղղակի կուգայ եւ կ'առաջարկվի պէտքը: Ոմանք կ'առաջարկեն թէ Քաղ. ժողովին րէկտորէն ելն տրվի. ասի ընդունելի չը կընայ ըլլալ, որովհետեւ մեր չ'ունեցած բանը

տրվելն չ'ենք կրնար տալ: ուստի կ'առաջարկեմ որ՝ որ յօդուածէն վերաքննութիւնը պիտի սկսի նէ, այն քուէի դրվի:

ՌԻՔԻՆՉԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ թէ Տեղեկագրեր էֆէնտիին բրտած առաջարկութիւնը դործադրութեան մասին գծուարութիւն մը չ'ունի. մանաւանդ հանգանակութեան եւ կուտիտիտութեան խնդիրներու մասին, որոնց համար առջի Մանանայրութեան մէջ յայտնի կանոններ տրամադրուած չ'են. այս անգամ օրինաց կարգը պիտի դասվին, ուստի այնպիսի խնդրոց վրայ յատուկ օրէնք սահմանելու ընդհ. ժողովը իրաւունք ունի անմիջապէս դործադրութիւնն ալ որոշելու, առանց սպասելու տէրութեան կողմէն վաւերացման:

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ԷՖ. — Կ'առաջարկեն թէ թաղական ժողովոց վերաբերեալ յօդուածներն ընդունվելէ ետքը անմիջապէս դործադրվի. ես չ'եմ կրնար բնական թէ Տէրութիւնը չը վաւերացուցած ինչպէս կրնանք դործադրել, շատ տեղ թաղական վէճեր կը պատահին, ինչպէս թօք-քարու, ելնի-մահալլէ եւն, եւ Տէրութեան կը դիմեն. արդեօք Տէրութիւնը իր չը դիտցած եւ չը վաւերացուցած օրէնքը կրնայ ըմբռնել եւ ի դործ դնել: Կ'առաջարկեմ որ Երեմիա Սրբազանին ըսածին պէս նախ չ'ին Մանանայրութիւնը դաւաններու մէջ դործադրվի:

ԻԲԷՆԴՅԵԱՆ ԷՖ. — Սովորութիւն էր որ նախորդաց նիստի մը տեսնադրութիւնը հետեւեալ նիստին կարգացվի, որն որ հիմա խափանված է թէեւ, բայց յիշեալ սովորութեան համեմատ երեսփոխանաց կը հարցվէր թէ նախորդաց նիստին տեսնադրութեանց վրայ դիտողութիւն մը ունեցողն ընէ, ըսել է թէ օրինաւորութիւն մըն էր այս: Արդեօք նախորդաց նիստերու տեսնադրութեանց մէջ արձանագրված չէ, թէ որ Մանանայրութիւնն է վերաքննելին եւ թէ ինչ եղանակաւ. մինչեւ որ այս հարցման որոշ կերպով չը պատասխանվի Ռիւանին կողմէն, ի դուր պիտի վիճարանինք: Նախ այս մասին պարզ պատասխան մը պէտք է տայ Ռիւանը, եւ ապա դիւրին է վերաքննութեան խնդրոյն անցնիլ:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Իրբեւ տեսնադրակր յանուն Ռիւանին տեսնադրութեանց սակին եղած դիտողութեան պատասխանելով կը յայտնեմ թէ տեսնադրութիւնը երբէք դադարած չ'է եւ չը կրնայ ըլլալ քանի որ օրէնք մըն է եւ Ռիւանական կանոնաց մէկը. միայն թէ ժողովը այս անգամ ժամանակ չը կորուսանելու համար փոխանակ ընթերցանութեամբ հազորդելու տը-

ղադրութեան տալու հաւանութիւն միայն ստած է, եւ ոչ թէ օրէնսդրուպէս վճռած թէ եւ կրնար ըլլալ որ կարճատու գրվէին, տեսնադրութիւնները եւ ամեն նիստին անոր համատու քաղուածը միայն կարգացվեր. ինչ եւ իցէ՝ ասի ժողովը օրէնսդրուպէս չ'է վրձնած այլ առժամանակեայ թոյլտուութիւն մ'ըրած է միայն զոր կրնանք նորէն Ատենական կանոնաց քննութեան ատեն հաստատ որոշման տակ ձգել:

Նակ միւս հարցման գալով թէ որն է է վերաքննելի Մանանայրութիւնը, պատիւ ունիմ պատասխանելու. թէ այս խնդիրը նախորդ տեսնադրութեանց նայելով որոշված ու լուծված է արդէն եւ նոր տարակուսանաց տեղ չ'է մնացած, եթէ անպատճառ տարակոյս յարուցնելու նոր փափաք մը չը կայ նէ մէջերնիս: Բարնէն Մանանայրութեան ծրագիր մը եկած է Ազգային ժողովէն չ'ընտրեալ Յանձնախումբի մը ձեռօք խմբագրեալ. ընդհ. ժողովը զանի ինք քննելը կարելի չը դատելով յանձնեք է իրմէ ընտրեալ յատուկ Յանձնախումբի մը որ քննէ եւ իր քննութեան արդիւնքը տեղեկագրէ ժողովին. ըսել է թէ այս Յանձնախումբին բերած ծրագիրն է վերաքննելին, քանզի անոր բերածը ընդհ. ժողովինն է, եւ ոչ ուրիշինը: Նոյնպէս կը հարցվի թէ ինչ եղանակաւ պիտի վերաքննվի, ահա հոս է խնդրին լուծման կետը. եթէ յօդուած առ յօդուած վերաքննվի գուցէ շատ մը տարիներու կարօտ ըլլայ այս ճամբով դործն ի գլուխ հանելը: Չեր Յանձնախումբն առաջարկած է թէ գլուխ առ գլուխ քննվի, իւրաքանչիւր երեսփոխան իր դիտողութիւնը համատուտաբար եւ պատճառաբանեալ կերպով գրի առնելով ամենքը մէկէն ներկայացնեն. առաջ մէկ նիստի մէջ բովանդակ գլուխը կարելի

է որ լինայ. կ'անցնվի ուրիշ գլխի մը, եւ այս կերպով քանի մը նիստի եւ քիչ ատենի մէջ կրնայ աւարտիլ վերաքննութիւնը: Իսկ յօդուած առ յօդուած քննելը շատ երկար կը տեսէ, շատ ձանձրալի կ'ըլլայ եւ կրնամ ըսել անտանելի եւ հետեւաբար անկարելի իսկ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԿ. — Կ'առաջարկվի որ Մանանայրութիւնը դաւաններու մէջ դործադրվի սկսի. նոյն իսկ Բիւզանդիոյ մէջ փորձառու ժողովուրդը գծուարութիւններ տեսած է այս մասին, դաւառացիք ինչպէս պիտի կարենան դործադրել որք զեռ անփորձառու են ամենեւին:

ՔՕԼՕԼԵԱՆ ԷՖ. — Առաջարկութիւն կ'ըլլայ թէ մէկ կողմէն օրէնքը հաստատվի, միւս կողմէն՝ եթէ գծուարութիւն չը կայ, դործադրվի. օրինակի համար հանգանակութեան խնդրը, ամենքն ալ կ'ունեն եւ կ'ընդունին որ դործադրվի. սակայն դործադրութեան մասին միաբանիլ մեզի համար անկարելի է. այն պիտի ընդունինք՝ բայց չը պիտի կարենանք դործադրել. ուստի ես հարկ չ'եմ տեսնել աճապարելու սակամ նա կետէն սկսելու համար, ըստ իս ամեն յօդուած հաւասար է քանի որ ործադրութեան մասին միաբանելին չը պիտի յաջղի. պէտք է որ ըստ առաջարկութեան Ռիւանեան էֆէնտիի ամեն երեսփոխան գլուխ առ գլուխ իր դիտողութիւնները պատրաստելով յանձնէ դիւանին, եւ դիւանը ուղղէ վիճարանութեանց կարգը. ասով կրնայ դիւրութեամբ վերջանալ վերաքննութիւնը:

Նիստը վերջաւ ժամ 10 ին, յառաջիկայ ուրբաթ նորէն ժողով դումարելու որոշմամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ	ԱՏԵՆԱՊԵՐ
Գ. ՕՏԵԱՆ	ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկատելով թէ հասարակաց պաշտօն մը որչափ բարձրանայ, այնքան կը ծանրանայ, և հասարակութեան կողմէն ալ նոյնքան յարգանաց և երախտագիտութեան իրաւունք կ'ըստանայ պաշտօնեայն՝ ըստ աստիճանի ծանրութեան պաշտաման և պատասխանատուութեան. ուստի հասարակութիւնն իր բարբառին մէջ զանոնք յատուկ շքանուններով կը պատուասիրէ՝ թէ եկեղեցական կարգի մէջ ինչպէս սովորութիւն է ի նախնեաց անտի և թէ աշխարհական կարգի մէջ:

Նկատելով թէ այս շքանունները մինչև ցարդ յատկապէս և պաշտօնապէս ճշգրեւալ չ'ըլլալով ըստ աստիճանի, մանաւանդ եկեղեցական կարգի մէջ ուր շնորհական է դասակարգութիւնը, հողեւորական բնութեան անյարմար քաւի և պափք բառերով ըստ հաճոյից բարդեալ զանազան մակդիրներ ու ածականներ կը տրվին որոնք առաւել աշխարհականի կը յարմարին, և ըստ իմաստին՝ այսպանելի շփոթութիւններ կը պատճառեն դասակարգութեանց մէջ. վասն որոյ հարկ էր բառնալ զայս անսեղութիւնը:

Ուստի Պատրիարքարանս Հայոց կարեւոր կը դատէ՝ ի բարեկարգութիւն ազգային Պաշտօնական գրութեանց՝ հետեւեալ ցուցակը հրատարակել և տալ ի ծանօթութիւն ամենայն Առաջնորդարանաց և Ազգային Դիւանատանց, հրաւիրելով ըղ նոսա միաշաւիղ հետեւիլ սոյն բարեկարգութեան:

Տուեալ ի Պատրիարքարան Հայոց ի Կ. Պօլիս
21 Նոյեմբեր 1870

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ (1)

Վեհաշնորհ Կաթողիկոս, — Տէր Հայրապետ և՛ Աստուածընտիր Հովապետ, Առաքելաշնորհ Սրբազնապետ, Հոգեւոր Տէր, — Վեհ Սրբազնապետութիւն.

Բ. ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ

Բարձրաշնորհ Պատրիարք, — Սրբազան Տէր և՛ Բարձրաշնորհ Սրբազան, — Բարձր Սրբազնութիւն.

Գ. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ (2)

Պերճաշնորհ Արքեպիսկոպոս, — Սրբազան Տէր և՛ Արհիաշնորհ Սրբազան, — Արհի Սրբազնութիւն.

Դ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

Գերաշնորհ Եպիսկոպոս, — Հայր Սրբազան, — Սրբազնութիւն.

Ե. ՎԱՐԳԱՊԵՏԱԿԱՆ

Հոգեշնորհ Վարդապետ, — Հայր Սուրբ, — Սրբութիւն.

Զ. ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ

Հայրաշնորհ Քահանայ, — Տէր Հայր և՛ Տիրաշնորհ Հայր, — Հայրութիւն.

Է. ՍԱՐԿԱՆԱԳԱԿԱՆ

Բարեշնորհ Սարկաւազ, — Տիրացու Եղբայր, — Եղբայրութիւն.

(1) Երբեւ մասնաւոր կաթողիկոս՝ Սայ Կաթողիկոսին շքանունն է հետեւեալը. Երանաշնորհ Կաթողիկոս, — Սրբազնագոյն Տէր, — Երանաշնորհ Սրբազնութիւն. (2) Գաւառական ընդհանուր Առաջնորդք ի պաշտօնի՝ ունեւոր ընդ իրաւասութեամբն Եպիսկոպոս Առաջնորդս կամ Փոխառաջնորդութիւնս.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԴՍՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Ա. ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ

Վեհափառ Արքայ և՛ Կայսր, — Վեհափառ և՛ Օգոստափառ Տէր, — Վեհափառութիւն. (Majesté)

Բ. ԻՇԽԱՆԱԿԱՆ

Վեհազուն Իշխան, — Վեհազուն Տէր, — Վեհազնութիւն. (Altesse royale)

Գ. ԵՊԱՐԿՈՍԱԿԱՆ

Բարձրապատիւ Եպարքոս, Փոխարքայ, — Բարձրապատիւ Տէր, — Բարձրութիւն. (Altesse)

Դ. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ (1)

Վսեմապատիւ Նախարար, Միւշիւր, Դեսպան, Մարզպան, — Վսեմապատիւ Տէր, — Վսեմութիւն. (Excellence)

Ե. ԱԻԱԳԱԿԱՆ (2)

Մեծապատիւ Բաշայ, Պէյ, Էֆէնտի և՛ Պարօն, — Մեծապատուութիւն.

Զ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (3)

Արժանանապատիւ Էֆէնտի, Պէյ և՛ Պարօն, — Արժանապատուութիւն.

(1) Նախարար (Մինիստր որ է Վիքէլա). Մարզպան (Վալի). (2) Արքունի կամ Ազգային գլխաւոր Պաշտօնեայք, ծողովականք եւ Խորհրդականք. (3) Գլխաւորներէն ետքը ամեն կարգի պաշտօնէից ընդհանուր շքանուն.

MEMORANDUM FOR THE RECORD

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

1. The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

(1) The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

MEMORANDUM

MEMORANDUM

MEMORANDUM

The Commission on the Organization of the Executive Branch of the Government has the honor to acknowledge the receipt of your letter of the 10th instant.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտվի ամեն գրավաճառաց քով եւ Նիկեզեցեաց բանկայնեքը :